

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ
ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N12708/2021/ԿՈՒՎ4/Ա**

Ք. Երևան

05.05.2021
Կազման ամսաթիվ

1. ՀԱՍՄԻԿ ԼԵՎՈՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

ՀՎՀՀ 35219919

2. ՈՒ

(բնակության (գտնվելու վայրի) հասցեն

72 0896265

(Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/
հանրային ծառայությունների համարանիշը)

3. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել.

«Հ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ ֆիզիկական անձ Հասմիկ Լևոնի Կիրակոսյանը 07.03.2019 թվականին օտարել է Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ղանդիլյան փողոց 24/1 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 500,000 ՀՀ դրամ:

Մինչև 29.06.2019 թվականի խմբագրությամբ գործող ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք.) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ տվյալ գույքի օտարումը համարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում և գույքի օտարումից ստացվող եկամուտները այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի:

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը, հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Ֆիզիկական անձի կողմից 2019թ. եկամտային հարկի տարեկան հաշվարկը չներկայացնելու և վճարումները չկատարելու պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով.

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ վերոգրյալ գործարքից հաշվարկվում է եկամտային հարկ 10 տոկոս դրույքաչափով՝ **50,000 ՀՀ դրամի** չափով ($500,000 \times 10\%$):

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ **7600 ՀՀ դրամի** չափով ($50,000 * 380 \text{օր} * 0,04\%$):

Այսպիսով, եկամտային հարկի գծով ենթակա է վճարման **57,600 ՀՀ դրամ** գումար, որից հարկ՝ 50,000 ՀՀ դրամ, տույժ՝ 7600 ՀՀ դրամ:

Հարկման բազա	Եկամտային հարկ	Հարկային օրենսգրքի 401 հոդվածով հաշվարկված տույժ	Ընդամենը
500,000	50,000	7600	57,600

Միաժամանակ Ձեզ տեղեկացվում է, որ հարկային պարտավորությունները հաշվարկվել են 05.05.2021թ. դրությամբ և ենթակա է վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը:

7.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը.

ՀՀ ՊԵԿ ՀՏ և ՌՎ վարչության կամերալ ուսումնասիրությունների և վերլուծության թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ

Հ. Ավետիսյան